բաւական սահմանը դնելով, նկարված է հորիզոնի վերայ, ինչպէս մի անհեթեթ և գեղեցիկ դեկորասիոն Երևանայ բեմի համար:

Երևանը ընկղմած է աղգային և կրօնական թանկագին յիշատակարանների մէջ: Նորա շուրջը խիտ առ խիտ սփռված են Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան թագաւորութեանց բերդերի, ապարանների, քաղաքների, եկեղեցիների և այլ նուիրական վայրերի փլատակները, որոնց կործանման փոշին դեռ բարձրանում է... Փոքրիկ մասը, որ դեռ կանգուն, նա էլ կործանման է սպասում...

Այսպիսի տեղերի վերայ, որի ամեն մի քարը իսուսն է, որի ամեն անկիւնը մեզ անցեալ հայկական պատմութեան մասերն է կրկնում, կարելի է արդեօք ծնվել, զարգանալ, միանգամայն և անշարժ մնացած լինել բարի զգացմունքներով և կոխ տալ այդ աւերակները ամբարիշտ ոտներով և ատելութեան խորշուրդներով: Մի երկիր, որ մկրտված է արիւնով, իսկ նորան կոխ են տալիս մարդիկ, որոնք հեթանոս են գործերով և սկզբունքներով:

Բացառութիւնները մի կողմ թող արած, առհասարակ մտածելով, այդ շատ ճշմարիտ է, որովհետև մենք ջինում ենք մեր տները, մեր դրացու հայի փլատակների վերայ, որ մենք ենք աւերել. մեղանից իւրաքանչիւրը ապրում էր իւր օգտին և